ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 23 >> ----------05----------2016թ. N -01/15/1765-16

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
նախագահ տիկին Լիանա Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 17.05.2016թ.N 284-ի 2 գրությամբ տեղեկատվություն ստանալու հարցմանը (մտից՝17.05.2016 թ.N 5865-16) հայտնում ենք,որ ՀՀ Արմավիրի մարզպետարանում գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության <<Mulberry>> համակարգը գործնականում ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ սահմանված պահանջների կատարումը: Այսպես. մարզպետարանի պաշտոնական կայքի (http://armavir.mtaes.am) <<Դիմեք մեզ>> բաժնում համալրմամբ ընդգրկված՝

- <<Մեր հասցեն>>,
- <<Մեզ կարող են դիմել>>,
- <<Թեժ գիծ>>,
- <<ՀՀ Արմավիրի մարզպետին կամ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին ուղղված դիմումների ձևեր>>,
- <<Գրել առցանց նամակ>>,
- <<Հետևեք Ձեր նամակի ընթացքին>>,
- <<Տեղեկատվություն ստանալու իրավունքն ու կարգը>>,
- << Տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձևեր>> և

- << Տեղեկատվություն ստանալու մասին հարցումների վիճակագրություն>> ենթաբաժինները լիովին հնարավորություն են տալիս ՀՀ կառավարության վերը նշված որոշման պահանջներին համապատասխան տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման և մարզպետարանի պաշտոնական կայքում տվյալների հրապարակման համար:

Միաժամանակ հայտնում ենք, որՀՀ Արմավիրի մարզպետարանն անմիջականորեն առաջնորդվում է ՀՀ կառավարության 15.10.2015 թ. N 1204-Ն որոշմամբ սահմանված <<Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման>>, <<Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների (այսուհետ՝ պետական մարմին) կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման>> կարգերով, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետի 28.12.2013թ. N 432-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգով, որոնք տեղադրված են ՀՀ Արմավիրի մարզպետարանի կայքում (http://armavir.mtaes.am/about/):

Ինչ վերաբերում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով հարցման ընթացքին հետևելու տեխնիկական խնդրի լուծմանը՝ նշենք, որ այն պայմանավորված է կենտրոնացված կարգով համապատասխան ծրագրային փոփոխությամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝. Փ.Կարապետյան
Դ.Դավթյան
Հ.Վարդանյան

Հեռ. /0237/2-08 56
2-42 62